ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 15.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
29-ը հունիսի 2015թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ և աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի ամփոփում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

2. *ՈՒսումնական տարվա ամփոփում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա II կիսամյակի քննաշրջանի արդյունքները. քննաշրջանը անցել է համաձայն ժամանակացույցի: Քննաշրջանին չներկայացած ուսանող չկա: Առաջադիմությունը համեմատած I կիսամյակի հետ բարձրացել է: Բարձր է նաև համեմատած նախորդ տարվա հետ: Առաջադիմության բարձրացմանը նպաստել է լրացուցիչ պարապմունքները և լրացուցիչ խորհրդատվությունները /առաջադիմությունը կցվում է արձանագրության տեքստին/: Նա միաժամանակ հանդես եկավ հանձնարարականներով կապված լուծարքային շրջանի հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա. Վ. Ցուցուլյանը, Ք. Վ. Օթարյանը և ուրիշներ: Նրանք ևս ներկայացրին, որ քննաշրջանը անցել է կազմակերպված:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ամփոփեց ուսումնական տարում իրականացված աշխատանքները, որոնք իրականացվել են ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ռ. Ռ. Քամալյանը, Գ. Վ. Գուլակյանը և ուրիշներ: Նրանք ևս իրենց գոհունակությունը հայտնեցին ֆակուլտետում իրականացված աշխատանքների մասին:

Վերջում ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը շնորհակալություն հայտնեց դեկանատից, ամբիոններից և ուսումնական խորհրդատուից բարեխիղճ աշխատանքի համար: Նա հույս հայտնեց, որ նոր ուսումնական տարում ևս կունենանք ձեռքբերումներ:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ